

լելը , և իբրև հաւատոյ մաս կը համարէր . և այսպէս ինչուան 88 տարի կեանք ունեցաւ : Իրեն գործնական առածը լաւ է որ հոս յիշենք 'ի խրատ ոչ միայն ուշ ելլող ծուլից այլ և չափազանց ջա-

նացողաց որ զբնութիւնը չափաւոր քու . նի պէս հարկաւոր բանէ մը կը զրկեն : Այսուհետեւ անհողին մտնել և հանուիս ալ եւլէլը՝ մարդուս առողջութիւն , ճոխութիւն և իմաստութիւն իւղարկելու :

## Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ւ Ց

Արևելիան վերջին խնդիրն ու պատերազմը <sup>1</sup> :

### 1855 — ՅՈՒՆՈՒԱՐ

5 . Զօրաց պատրաստութեանը վրայօք Աւատրիոյ ըրած ինդրոյն Բրուսիոյ դահլցին տուած պատասխանը (Տ . 24 Դեկտ . 1854) . Բրուսիան վտանգ մը չտեսներ Աւստրիոյ քանի որ այս վերջինս պաշտպանողական վիճակի մէջ կեցած է . և հետեաբար անօգուտ կը սեպէ զօրաց պատրաստութիւնը . Բրուսիան Նոյեմբերի 26ին դաշնագրութիւնը ըրած ժամանակ կը համարէր որ Աւատրիոյ արկածութեան պետութեանց հետ ըրած դաշնագրութիւնը ինքն ալ տեղեակ ըլլայ , իսկ արդիւ մը ժամանակ անցաւ վրան ու դեռ բան մը իմացած չէ՝ Բրուսիան ուրիշ բան չկրնար ընել , բայց եթէ Գերմանական ընդհանուր դաշնակցութեան կանոնացը վրայ հաստատուն կենալ . այսուամենայնիւ , իբր մեծ տէրութիւն , կը պահանջէ իր իրաւունքը , և կ'ուզէ որ դաշնադրութեանց մէջ ինչ փոփոխութիւն որ ըլլայ՝ ինքն ալ . իբր Եւրոպական տէրութիւն , տեղեկութիւն ունենայ այն փոփոխութեանցը : — Նոյն միջոցը Մանդայ ֆէլ պաշտօնագիր մը կը խրկէ Բարիզի ու Լոնտոնի դեսպանացը , որուն գլխաւոր նիւթն էր Բրուսիոյ՝ իբր Եւրոպական մեծ տէրութիւն ունեցած իրաւունքը պաշտպանել : — Գաղղիոյ արտաքին գործոց պաշտօնէին Պեռլին կեցող կայսերական պատուիրակ Մուսդիէ մարքիզին գրած պատասխանը . — Բրուսիոյ մեծ տէրութիւն ըլլալուն վրայ ոչ ոք տարակոյս հանած է , բայց այն պիսի իրաւունքէն՝ պարտքերն ալ հետեաբար անքածանելի են : Գաղղիան , Անդղիան և Աւստրիան չեն կրնար հաւանիլ որ տէրութիւն մը ամենայն հանդիպած գէպքերուն մէջ ինքզինք օտար սեպելով այն գիպուածոց վախճանին հասնելու ինքն . իրեն նոր ճամբայ մը բռնէ :

7 . Կորչաքով Ռուսիոյ արտաքոյ կարգի Վենասա խրկուած պատուիրակը , կը յայտնէ որ իշխանութիւն առած է ընդհանութը դաշնադրութեան մը վրայ խօսելու , հիմն սեպելով ծանուցեալ չորս պայմանները . հետեւեալ մեկնութիւնը տալով անոնց . Ա . Ռուսիոյ կայսերութեան Մոլ-

տաւիոյ ու Վալտաքիոյ վրայ ունեցած առանձին պաշտպանութիւնը դադրի : Բ . Դանուգի նաւարկութիւնը Վենեայի դաշնադրութեան համեմատ ազատ ըլլայ . Գ . 1844ին Յուլիսի 13ին դաշնագրութիւնը նորէն աչքէ անցուի , որպէս զի Օսմանեան կայսերութե էութիւնը Եւրոպական հաւատարակշուութեան ամբողջապէս կապուի : Դ . Չորս տէրութեանց միաբան պաշտպանութիւնը , որպէս զի ամենայն քրիստոնեայ հպատակաց կրօնական արտօնութիւնները անխախտ պահուին : Իսկ Երրորդ պայմանին վրայօք պատրաստ է (Կորչաքով) իշխանը խաղաղութեան պաշտօնական խորհրդոց մէջ միջոցներ ընդունելու . որովզ զրուած Ռուսիոյ Սև ծովուն մէջ ունեցած առաւելութեանը չափ մը դրուի . բաւական է որ այն պիսի միջոցներ առաջարկուին որ Ռուսիոյ կայսերութեան մէջ ազատ իշխանութեանը իրաւանը չը դդային :

14 . Բրուսիոյ ամսոյս Ֆին տուած ծանուցագրին Աւստրիոյ կողմանէ տրուած պատասխանը . և նոյն միջոցին Պուլ կողմին Գերմանիոյ այլ և այլ տէրութեանց գրած պաշտօնագիրը : — Աւստրիա շատ կը ցաւի . որ իր 1854ին Դեկտեմբեր 12 ը րած ինդրոյն Բրուսիա մտիկ չըրաւ : Բայց ինքը նորէն կը կրկնէ նոյն ինդիրը դաշնակցաց զօրաց մէկ մասին պատրաստութեանը վրայ . և այս իր ինդրոյն հաստատութիւն կ'առնու 1854ին Դեկտեմբեր 9ին դաշնակցութեան որոշունքը : Ռուսաց կողմանէ Աւստրիոյ գէմ յարձակման վիճակը դադրած չէ . և Ռուսիոյ ամսոյս 7ին եղած խորհրդոյն մէջի տուած յայտարարութիւնները իրեն բաւական ապահովութիւն չսեպեր : — Այս պաշտօնագրին հետ Աւստրիան մտերմական թուղթ մը կը խրկէ իրեն խորհրդակից եղող Գերմանական աէրութեանց , որուն մէջ կը խնդրէ որ եթէ Բրուսիան դեռ տարակուսական քաղաքականութեան մէջ կենալու ըլլայ՝ ասսնք իրեն օգնեն , և թէ որ խաղաղութիւն ըլլայ՝ իրենց ըրած զոհին համեմատ փոխարէն կ'ըլլուի :

15 . Փետրուարի 1էն սկսեալ Ռուսաց Սև ծովուն մէջ եղած նաւահանդիսաները՝ Գաղղիոյ և Մեծին Բրիտանիոյ միացեալ նաւախումբին կողմանէ պաշտպան վիճակին մէջ կը դրուին :

17 . Պարոն Մանդայֆէլի շղաբերական պաշ-

<sup>1</sup> Տես Հա . ԺԴ . Երես 15 , 92 , 159 , 191 , 223 , 255 , 286 , 334 . Հա . ԺԴ . Երես 11 , 82 , 129 , 162 , 227 , 275 , 307 , 355 , 371 :

տօնագիրը Գերմանական գաշնակից տէրութեանց քով Բրուսիոյ պատուիրակներուն . — Բրուսիա շատ գոհ սրտով կը տեսնայ , որ չորս մեծ տէրու . թիւն միաբան են իրենց նախնական սկզբանցը մէջ , այսու ամենայնիւ Բրուսիա չկրնար իր արդի քաղաքական բռնած ճամբան , ու անոր ամէն հետեանքները մէկդի դնել : Իր եւրոպական տէրու . թիւն և իր դրիցը համար ընելիք ազդեցութեանը պատճառաւ , եթէ բացուելու ժողովը յաջող ելք մ' ալ չունենայ , Բրուսիա ինքզինք պարաւոր չեւպեր Ապրիլի դաշնադրութեան և Նոյեմբերի նին յաւելուտծ յօդուածներուն պայմանները կատարելու , մանաւանդ Աւստրիոյ զօրքով օգնելու կէտին մէջ :

21 . Բրուսիոյ դահլձին Լոնտոնի ու Բարիզու պատուիրակներուն խրկած ծանուցագրիրը : — Դեկտեմբերի 19ին պաշտօնագրին յայտարարու . թիւնը նորէն կը կրկնէ . քանի որ արևելեան խընդիրը լուծուելու համար ըլլալիք ժողովքին մէջ Բրուսիան ալ չմանէ , անօգուտ են Բրուսիոյ ճամբան փոխել տալու համար եղած դաշնադրա . կան խօսակցութիւնները : Այս բանս Բրուսիան չէ թէ իր իրաւունք՝ հապա իբր պարտք կը պահանջէ , որովհետեւ Վեննայի արձանագրութեանը Բրուսիան ալ ստորագրած ըլլալով ան ընդհանուր գործ մը սեպուեցաւ : Բայց այն արձանա . գրութիւնը եթէ մէկ կողմանէ մեր վայ պարտք կը դնէ , մէկալ կողմանէ ալ մեր իրաւունքը կը հաստատէ : — Երկրորդ օրը Մանդայֆել շրջա . բերական մը կը հանէ Բրուսիոյ գերմանական դաշնակցաց քովի պատուիրակներուն , ու կ'իմացընէ իրենց թէ Աւստրիոյ դաշնակցաց ժողովըն ընելիք առաջարկութեանցը գիմաց՝ Բրուսիա ինչ ճամբայ պիտի բռնէ :

22 . Դաշնակցաց ժողովըն կ'առաջարկէ Աւստրիա Ա . Որ դաշնակցութեան ամբողջ զօրքը կամ գոնէ կեսը որչափ կարելի է շուտ պատերազմի ոտքի վայ դրուի . Բ . Ժողովը շուտառվ այս զօրքին ընդհանուր հրամանատարը մը անուանէ :

23 . Սարտենիոյ ու Արևմտեան տէրութեանց մէջ եղած նիզակակցութեան դաշնադրութիւնը կը ստորագրուի . նոյն ատեն զինուորական դաշնք մը կը դրուի մէջերնին՝ Խրիմ 15,000 Բիէ . մոնդեցի օգնական զօրք խրկելու , որոնց հրամանատարը Ալփոնսոս Լամարմուա կ'անուանի : — Սարտենիոյ ու Մեծին Բրիտանիոյ մէջ յաւելուած մ' ալ կը ստորագրուի , 1,000,000 լիրա ստեռլին փոխ տալու :

Տրուէն տը Լիւի Գերմանիոյ արքունեաց քով եղող Գաղղիոյ նուփիրակներուն շրջաբերական մը կը խրկէ . — Աւստրիոյ ու Բրուսիոյ մէջի տարածայնութիւնը՝ զԳերմանիան վտանգի մէջ կը դնէ . ուստի պէտք է որ այս վերջինս երկու կողմի պատճառները քննելով հաստատուն որոշմունք մը տայ : Պեռլինի դահլիճը ինքզինք այնպիսի վասանգի մէջ ձգեց , որուն ինքն է պատասխանատու , և ուսկից գեռ ձեռքն է դուրս ելլալը : Իր դիտմանց մէջը հաստատուն կենալով , ինքիրմէ իրաւունքը կը կորսընցընէ 1841ին Յուլիսի 13ին դաշնադրու . թեանը վերսախին քննութեանը խառնուելու , ու

բովհետև թէպէտ ինքն ալ այն դաշնագրութեանը ստորագրեց , բայց մէջի պայմանները ուզեց կամ չկատարել . և կամբոլորովին ոչընչացընել :

Տրուէն տը Լիւի պատամիան կու տայ Բրու . սիոյ ամսոյս 21ին գրած ծանուցագրին . — Փա . փաքելի էր որ Բրուսիան Դեկտեմբերի դաշնա . գրութեանը առանց վարանելու ստորագրելը . այ . սու ամենայնիւ որովհետեւ Բրուսիան այն դաշնա . գրութեան վրայ առնուելը էր , անոր համար պա . տրաստ է Գաղղիոյ Բրուսիոյ կողմանէ առաջար . կելիք խաղաղութեան առաջարկութիւնները քըն . նելու , միայն այս պայմանով որ առաջուց խօսք . տայ Ռուսիոյ հետ պատերազմ բանալու ու Գաղ . ղիոյ . Անգղիոյ և Աւստրիոյ հետ բոլորովին առանց պայմանի մէկ ըլլալու՝ թէ որ իր առաջարկու . թիւնները խաղաղութիւն հաստատուելուն բաւա . կան ըլլան :

## ՓԵՏՐՈՒԱՐ

3 . Անգղիոյ Տաճկի տէրութեան հետ դաշնա . գրութիւնը մը կ'ընէ , որով 20,000 տաճկի զօրք . Անգղիոյ հրամանատարութեան տակըմտնայ : Այս դաշնագրութեան ստորագրելիք գիրը Մարտի 12ին երկու կողմանէ կոստանդնուպոլիս կը ստո . րագրուի ու իրարու կը յանձնուի :

8 . Գերմանական դաշնակցութեան ժողովը կը վճռէ որ զօրաց գլխաւոր խումբերը շուտ մը պա . տերազմի ոտքի վայ գրուի :

9 . Գիւրտերու ապստամբութիւնը կը նուա . ճուի . կլմի-Բաշան Տէրպան գեղին մօտ կը յադ . թէ անոնց . ու երկրորդ օրը Տաճկաց զօրքը Ճէ . զիրէ կը մտնեն :

10 . Կիկողայոս Ռուսաց կայսրը հրաման կը հանէ , որ բոլոր կայսրութեան մէջ ընդհանուր զօրք ժողվուի :

11 . Կորչչաքովիշխանը Պուլ կոմսին կ'իմացընէ : Ի Վեննա , որ Ռուսաց կայսեր ամսոյս 10ին հա . նած յայտարարութեան միաքը թշնամութիւնը ը . նել չէ , հապա իր երկրին պաշտպանութեանը հա . մար նախազգոյշ պատրաստութիւնը մը , և պատ . րաստ է նորէն դաշնագրութեան ինջնալու , հիմն սեպելով խաղաղութեան կանխածանօթ չորս կէ . տերը :

16 . Պուլ կոմսը շրջաբերական մը կը խրկէ Գեր . մանական դաշնակից տէրութեանց քով եղող Աւ . ստրիոյ նուփիրակներուն : — Դաշնակցութիւնը իր զօրքը պատերազմի ոտքի վայ դնել տալովը ապրի . լի 20ին պաշտպանողական և լիսասողական դաշ . նազրութեան մէջ մտած է : Հիմակուընէ կը մեր . ժէ Աւստրիա Բրուսիոյ կարծիքը , որ այս պատ . րաստած զօրքը միայն դաշնակցութեան մէջ եղած երկիրները պաշտպանելու համար ըլլան : Դաշ . նակցաց նախընթաց յայտարարութեամբը կ'իմա . ցուի , որ այս զօրքը Բրուսիոյ և Աւստրիոյ դաշ . նակցութենէ դուրս եղած երկիրներն ալ պիտի պաշտպանէ . մանաւանդ եթէ Աւստրիա Դա . նութեան գաւառաց մէջ ալ թշնամութիւնը մը կրե . լու ըլլայ :

Կը շարունակուի :